Եվրամիության Արտաքին Գործերի Ամսագիր

Էլեկտրոնային եռամսյակային թերթը եռամսյա կտրվածքով լուսաբանում է Եվրոպայի արտաքին քաղաքականության, արտաքին առևտրի, զարգացման, անվտանգության քաղաքականության, ԵՄ-երրորդ երկրների հարաբերությունների եւ տարածաշրջանային ինտեգրման վերաբերյալ հարցերը *(ԵՄԱԳԱ)*

Հրատարակված է LIBERTAS կողմից

ԼԻԲԵՐՏԱՍ – Եվրոպական համալսարան
Հասցե: Փող. Լինդենվեգ 37, 72414 Ռանգենդիգեն,
Գերմանիա
Հեռ. +49/7471/984996 -0, Ֆաքս. 49/7471/984996-19
Էլ.հասցե: eufaj@libertas-institut.com
Կայք: www.libertas-institut.eu

Գլխավոր խմբագիր՝ Հանս-Յուրգեն Զահորկա, **Խմբագրի տեղակալ**՝ Օլիվե Վեդրին, **Կրտսեր խմբագիր**՝ Օֆելյա Սարգսյան, **խմբագրական օգնականներ՝** Էկա Մեսխրիկաձե, Մեերիմ Օբոսկանովա, Թամ Վացաձե, **Խմբագրական խորհուրդ**՝ Վիկտոր Յենգիբարյան, Զիդաս Դասկալովսկի, Մարտին Պոնտզեն, Սերգեյ Ե. Մետելև:

Ամսագրի խմբագիրները հանդիսանում են իրենց գործի մասնագետներ. Հանս-Յուրգեն Զահորկա՝ փաստաբան, պետական խորհրդատու, համալսարանի դասախոս, մի շարք գրքերի և հոդվածների հեղինակ, Գերմանիայի կողմից Եվրամիությունում նախկին պատգամավոր: Օլիվե Վեդրին՝ մի շարք ֆրանսական համալսարանների պրոֆեսոր, 2011թ. հունվարից Revue Defense Nationale ամսագրի ռոսալեզու տարբերակի գլխավոր խմբագիր: Հանս-Յուրգեն Զահորկան և Օլիվե Վեդրին հանդիսանում են ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԻ անդամներ (վերջինս ելույթ է ունենում Եվրահանձնաժողովի անունից): Վիկտոր Յենգիբարյանը Հայաստանում Եվրոպական շարժման նախագահն է: Օֆելյա Սարգսյանը քաղաքագետ է: Պրոֆեսոր Զ. Դասկալովսկին Բիտոլա համալսարանի քաղաքագետ է, ինչպես նաև Սկոպժեի (Մակեդոնիա) գիտական կենտրոնի տնօրենն է: Դոկտոր Մարտին Պոնտզենը գերմանիացի տնտեսագետ է, ներկայացրել է Գերմանիայի ֆեդերալ բանկը Մոսկվայում (Deutsche Bundesbank), ներկայումս հանդիսանում է Գերմանական Ֆեդերալ Բանկի տնօրեն, իսկ պրոֆ. Սերգեյ Մետելևը տնտեսագետ է և հանդիսանում է Ռուսաստանի է առևտրի և տնտեսագիտության պետական համալսարանի Օմսկի մասնաճյուղի ռեկտոր:

Դուք կարող եք ունենալ անվճար ելք դեպի www.eufaj.eu ամսագիր, ինչպես նաև կարող եք ամսագիրը պատվիրել անվճար՝ ուղարկելով հայտը հետևյալ հասցեով. eufaj@libertas-institut.com: Հայտերը ընդունվում են ֆրանսերեն ,անգլերեն, գերմաներեն, իտալերեն, իսպաներեն):

Հեղինակների անունները, հոդվածները, թեմատիկ տերմինները, ինչպես նաև գրքերի վերլուծությունները նույնպես հասանելի են ամսագրի կայքում՝ www.eufaj.eu:

Այսօր աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները ազդում են նրա վրա, ինչը մենք անվանում ենք Եվրոպական արտաքին քաղաքականություն: Վերջինս իր հերթին ստիպված է պայքարել իր վարկանիշի դեմ՝ 'տնտեսական հսկա, բայց քաղաքական թզուկ':

ԵՄ արտաքին քաղաքականությունը իրենից ներկայացնում է ոչ ավանդական գործիքների ձևավորում և կիրառում. մասնավորապես այսպես կոչված <<փափուկ իշխանության>> գործադրում, ռազմական միջամտություն խաղաղություն հաստատելու նկատառումով, 27 աշխարհաքաղաքական կարծիքների բախումների դեպքում ընդհանուր հայտարարի գալուստ, արտաքին առևտրի զարգացման ուղությամբ քաղաքականության մշակում և իրականացում, ինչպես նաև անվտանգության քաղաքականության հաստատում: ԵՄԱԳԱ-ն անդրադառնում է նաև ԵՄ և երրորդ երկրների (բոլոր ոչ ԵՄ անդամ երկրներ) միջև գոյություն ունեցող հարաբերություններին, ինչպես նաև աշխարհում արագորեն զարգացող տարածաշրջանային ինտեգրման հարցին: Սա վիճահարույց գործընթաց է և հստակորեն դեռ երկար ճանապարհ ունի անցնելու, և այն կարելի է համեմատել մի նուրբ բույսի հետ, որը գտնվում է գրավիչ ինստիտուտների լաբիրինթում:

Մենք փորձում ենք ստեղծել եռամսյա կտրվածքով էլեկտրոնային թերթ այս հարցերի շուրջ, որը կարող է հասանելի լինել տարբեր հայացքներ ունեցող հեղինակների, որոնց մենք ևս հրավիրում ենք համագործակցության: Ամսագիրը ինդեքսավորվում է ինդեքսավորմամբ զբաղվող առաջատար ծառայությունների կողմից: ԵՄԱԳԱ-ի գործունեությունը բազմակողմանի է. այն կարող է լինել տեղեկատվական, նկարագրական, բացատրական, կառուցողական, քննադատական, տեսական, ինչպես նաև գործնական: Ամսագիրն արդարացիորեն կլուսաբանի Եվրոպական հասարակության հետևյալ արժեքները՝ մարդու իրավունք, օրենքի գերակայություն, բազմակարծություն, հավասարություն, ժողովրդավարություն, սոցիալական շուկայի տնտեսություն, ներքին առևտուր, խաղաղություն, համագործակցություն եւ բարեկամական համախմբվածություն արևմուտքի և արևելքի միջև, հյուսիսի և հարավի միջև (և, իհարկե, հյուսիս-հյուսիս, հարավ- հարավ հարաբերությունների միջև):

Այս էլեկտրոնային հրատարակությունը, որը սկսել է իր գործունեությունը 2009թ. աշնանը, ցանկանում է Եվրամիությանը տեսնել որպես աշխարհաքաղաքական ուժեղ դերակատարի, որն ունի հստակորեն մշակված քաղաքականություն:

ԵՄ կողմից գործածվող փափուկ ուժի մոտեցումը կարող է լինել համաշխարհային հաջողված օրինակ, սակայն, մյուս կողմից, ամսագիրը կմատնանշի այն ոլորտները, որտեղ կան թերացումներ և կառաջարկի նոր տեսակետներ, որոնք անհրաժեշտ են բարեկարգելու համար Եվրոպական արտաքին քաղաքականությունը:

Մարդիկ, ովքեր աշխատում են ամսագրի համար, պրագմատիկ են, հավասարակշռված, բազմակարծիք և պատասխանատու: ԵՄԱԳԱ-ի հրատարակչական տունը հանդիսանում է Լիբերտասը՝ Եվրոպական ինստիտուտ, գիտահետազոտական կենտրոն, որը զբաղվում է Եվրոպական միջազգային տնտեսության և կառավարման հարցերով, սահմանափակ պատասխանատվությամբ կազմակերպություն է՝ պաշտպանված Գերմանիայի օրենքներով, որոնք հայտնի են իրենց Եվրոպական թափանցելիությամբ և աշխատանքի անաչառ մոտեցմամբ:

Եվրամիության արտաքին գործերի ամսագիրը (ԵԱՄԳԱ) հրատարակվում է միայն անգլերեն: Հրատարկչական վարչությունը ունի աշխատանքային մեծ փորձ Եվրամիության կառույցների, կառավարությունների, գիտահետազոտական կենտրոնների, տարադրամային ինստիտուտների հետ: 2011թ. մարտից հրատարակչական վարչություն են մտնում նոր անդամներ: Եվրամիության արտաքին գործերի ամսագիրը (ԵԱՄԳԱ) անց է կացնում կլոր սեղաններ, սեմինարներ, ինչպես նաև մասնավոր հետազոտություններ:

Ընթերցողները կարող են նպաստել Եվրամիության արտաքին գործերի ամսագրի (ԵԱՄԳԱ) հաջողությանը, ինչպես նաև երաշխավորել ամսագրի անկախությունը՝ համալրելով Եվրամիության արտաքին գործերի ամսագրի պասիվ համագործակցողների շարքերը (լրացուցիչ տեղեկություն կարելի է ստանալ 2011թ. մարտից մեր կայքում www.eufaj.eu):